

ԱՄԷՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 2

Գ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրամբ ԻճԶ Կ՛րճԵՆ

Խոսոս Հրեհոսկն

Շէլլի

Ինտրոյի «Ներս շխարհ»

Հրայրի Փրփուր

Գրագէտներու Սկզբ

Վախճ

Անոր

Նոր Գրքեր

Գրական Եւ Գեղարուեստական

Ենովք Արսէն

Եղիա Տէսիրճիպաշեան

ՏՕԲԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԱՐԱՍ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՍԵԱՆ

ԷՄԻԼ ՖԱԿԷ

ԱՆԱԹՈԼ ՖՐԱՆՍ

ՃԱՆԻԿ ԵԱԶԸՃԵԱՆ

Ե. Ա.

50 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

1906

 Ծանուցումի փափաքողներու ուշադրու-
թիւնը կը հրաւիրենք սա պաքազային փայ թէ՛
Մասիսի կողքերը բացառիկ կերպով յարմարագոյն
էջերն են այդ նպատակին համար՝ որովհետեւ
ամէ՛ն մասերը մասնաւոր ուշադրութեամբ և հե-
տաքրքրութեամբ կը կարգացուն ամէ՛ն անգամ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ
ՌԵՐԱ. ՄԵՎ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 200
Կաթմա-Սէրայի Լիսէին դէմ

Դժ. ԵՃ. ՇՐ. օրեր կանուխ աստուրնէ
մինչև իրիկուան ժ. 11½

ԲՇ. ԴՇ. ՈՒՐ. օրեր ԵՒՆ մինչև 11½

Եփրակի օրեր ժամադրութեամբ

5 ՕՍՄ. ՈՍԿԻԻ ՊԱՐԳԵԻ ՄԸ

Մինչև Յունիարի վերջը Մասիսի որ եւ է մէկ էջին մէջ, գրաւածքի մը
մէկ անկիւնը պիտի գտնուի քանի մը ստղով ծանուցում մը, որ պիտի
ծառայէ ընթերցողին ցայնելու թէ, ինչպէս կարելի է շահիլ 5 Օսմ. ամկի
պարգեւը: Այդ երկուսը գրաւածքին մէջէն ճիշդ գտնուլ և ստաջին անգամ
հասցէին ներկայացնողը՝ պիտի ստանայ 5 Օսմ. ամկի: Երբողին մէջ
ընթերցողը լիովին պիտի տեղեկանայ 5 ամկին ինչպէս և ո՛ւրիշ գանձե-
լուն: Ամէն ընթերցող կրնայ շատ դիւրաւ գտնել այդ ստղերը գրաւածք-
ներուն մէջէն: Կը բաւէ միայն ուշադիր կարդալ բոլոր գրաւածքները:

ԱՐՐԱՀԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ

Ի Զ Մ Ի Տ

Այլ ուսանանք:

Հրգեհի և ծովային ապահովագրութիւններ՝ շահաւէտ պայմաններով:
Ամէն տեսակի դամբարանի դարձեր, ներածում, արտածում և մաքրային
դործողութիւններ:

Եւրոպական առաջն սկարդ գործարաններու միջոցաւ՝ գունաւոր և պարզ
արտադրարդ. քառթ — վտարայններու պատրաստութիւն, ֆոթոկրամի
համեմատ:

Այլ հաշարքէ:

«Թոմաս Ա. րիսմոր» Անգլ. Տան գրամարկներէն:

Սուրբանիս առաջնակարգ բիւսններ՝ շարաթական վճարումներով:

Ամենակերպին գրութեամբ պիսիքներ:

Ամէն տեսակի երկրագործական և թիթեղագործի մեքենաներ:

Պաշտած քանակութեամբ և տեսակով ընտիր և հաշաւէտ թէյեր:

Դառնային ցանձնարարութիւններ վտարով կը կատարուին:

Հասցէ՝

ԱՐՐԱՀԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ, Իզմիլ

(2-10)

ՌՕՍԻԱ — ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՐԿԱԾՆԵՐ

1881 մարտ 20-ի Կոյս. Ուքրալով արտօնուած:

Գեղարտաւարին բեղերագրելի, իրեն յատուկ շէնքը:

Քննիչութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ
կընդունի:

ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-
ՆԵՐՈՒ, քննչէս նաև ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ կատարուե-
լուան դէմ:

Քննիչութեան գրամագլուխը, տարողւայէս վճարուած 10,666,666 ֆրք.

Երաշխաւորութեան գումար աւելի քան 149,852,000 »

Քննիչութեան ապահովագրուողներուն վճարուած

գրամագլուխ և վիսններու հատուցում 355,840,000 »

1903 տարուն մէջ դանձուած ապահովագին և տոկոս 64,553,800 »

Ամէն տեսակ տնտեսական համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին,
Աղաքեան խան, Վոյստա, Ղալաթիա:

(2-10)

3-Յ ՕՍԱՄ. ՈՍԿԻԻ ՄՐՅԱՆԱԿ ՄԸ

Հաստատած ենք զառաւելան զործակալներու միջեւ, զոր կընայ շահիլ ո՛ր եւ է փաթեմջան զործակալ: Այն անձը կամ զործակալը, որ մինչեւ Փետրուարի վերջը ամէնէն թարձք թիւով բաժանորդը կը գտնէ, և ամբողջովին կը հասցնէ մեզ բաժանորդագիրնը, կը ստանայ 3 Օամ. ոսկի: 30է վար թիւ մը չընդունաւիր այս մրցումին համար: Այս բաժանորդներէն ամէնքն ալ իրաւունք ունին ստանալու մեր պարգևները ճրիարաբ (սեւ պարգեւաւոր բաժանորդագրութիւն): Ո՛ր եւ է զառաւելումով անձ կընայ շահիլ այս սրբոյեւը: Պէտք չկայ սորակու 30 բաժանորդին լրանալուն՝ որպէսզի զործակալ մը զմտնք ամբողջովին զրկէ կմբազրութեանս: Կընայ պարբերաբար զրկել իր բաժանորդները, յիշելով միշտ իր անունը, և երբ մեր տամարին մէջ լրանայ 30 թիւը՝ անմիջապէս կը ստանայ 3 Օամ. ոսկին: Մրցանակը շահողին տնունը՝ ընտելութեան տեղովը՝ պիտի ծանուցուի Մասիսի մէջ: Մէկէ աւելի 30 թիւը անցնողներ՝ ամէնքն ալ պիտի ստանան նոյն պարգևը: Մրցանակին գումարը կը բարձրանայ 4 ոսկիի՝ երբ զործակալ մը կ'ընդգրկէ 40 թիւը, և 5 ոսկիի՝ երբ 50 ըլլայ թիւը: Եւ չարունակաբար: Սահմանը ընդարձակ է: Օ՛ն, ուրիմն, զէպի ամէնէն բարձք թիւը:

ԲԱՅԱՌԻԿ ԱՌԻՔ ՄԸ ԴՐԱՄ ՇԱՀԵԼՈՒ

«Ռէքլամ»ի զարուն մէջ կ'աղբինք, և ամէն լուրջ անձ՝ ըմբռնած է անոր հակայ կարեւորութիւնը անանեաւան կեանքին մէջ: Այդ առիթէն նպաստաւորուելու մրցում մը հաստատած ենք Մասիսի մէջ, որուն կընայ մասնակցիլ ո՛ր եւ է բաժանորդ ճրիարաբ: Մասիսի ո՛ր եւ է բաժանորդ՝ եթէ ուզէ՝ իրաւունք ունի յատկապէս այս մրցումին համար պատրաստուած ծանուցում մը հրատարակել մեր կողմին մէկ քառորդ էջին մէջ: Այս նպատակին համար զրկուելիք ծանուցումին մէջ վնասուած յատկութիւններն են աղղին խմբագրութեան աղղուութիւնը, անոր յղացումին սրտատութիւնը և հնարաւոր կերպով այն հրատարիչ հանգամանքը՝ որ ուէքլամի մը զլիսաւոր ձգտումը կը կազմէ: Մարտի վերջը, այս նպատակով եղած ծանուցումները պիտի գնահատուին ձեռնհաս անձերէ, և այն ծանուցումը որ առաջնութիւն շահի ի յղացումին զեղեցկութեամբ և լեզուն աղղուութեամբ, իրաւունք պիտի ունենայ վեց ամիս շարունակ ձիաբար հրատարակուելու, կողքի մը կիս էջին վրայ: Այդ ծանուցումներուն խմբագրութիւնը ձգտած է տէրերուն: Ռէքլամին զերը և աղղեցութիւնը ըմբռնող անձ մը՝ քաջ պիտի դիմնայ նպատաստուելի այս առիթէն: Բաժանորդ չեղողներ ալ կընան մասնակցիլ այս մրցումին՝ վճարելով 20 դրշ., առաջին անգամ ըլլալիք ծանուցումին համար:



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 2

9 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1906

ԴՐԱՄԸ ԻՆՉ ԿՐՆԵՆ

Տգաւթիւնն իր մէջ յայտնուող շահադիտութեան և դրամապաշտութեան մղի ընադդ մը, պատճառ եղաւ որ Բարսեղ չ'ընայ ողմիկ իր քաղաքին մէջ, և դրամ չահելու, առակի դիզելու իր անյող ցոնկութիւնը յառէ դէպի աւելի՛ լայն տարածեցնելու խոստումը տնկցող կեդրոններ։ Ու ըրաւ-չըրաւ, կէս-խօշիկով, կոնսոլը մարլ, գլուխը բաց, նետուեցաւ մայրաքաղաք։ Իր ճարգիկ ու աչալուծ աղաւ սուր հռատութիւնովը, առաջին դրապումը եղաւ հոն՝ դրամի կծիկներու պահտոս՝ անկիւնները միտնել իր քիթը, անոնց քովը գեղերիկ, գունէ քսակ անոնց, որ մը ինք ալ կարենալու համար արքանալ ոսկիններու գեղին վառքին հաճոյքին, որ արդէն իսկ կը գնալցնէր զինքը, ու հիւանդ կ'ընէր միտքը գիշեր-ցորէկ։ Չէ՞ որ իր մածերը ըսած էին. «հարուստին քովէն քուեկով անցիր. աղքատէն վախճելով վախճէ»։ Ասիկա նշանաբան մըն էր՝ որուն խոր ճշմարտութեանը լիովին խելամոռած էր ու տա՛ւապէս անոր ծառայութեանը նախընտրելու խառնած։ Դրամ... ոսկի... քսակ... շահիկ... տարբարի լեցնել... կծիկ ընել ու համբանքով շարիկ... առնաք խաչաղներ էին, որոնց համեմու գողութիւնովը յախշտակուած աղան, քունը կը կորնոցնէր, և անոնք իր գիշերները կը վրդովէին, խանդաբեկով իր ցնարած երեւակայութիւնը։ Այդ մանամուկիւնն մ'ըլլաւ, գոտու միջոցը դրամ շահելու ճամբաւը մէջ մանկուան, աշկերտութեան երթալով հարուստ վաշխատուի մը, որ մեռաւոր, անշուք, լքուած խանի մը անկիւնը, միժառուսեր սենեակի մը խորը առանձնացած, սեղանաւորակաւ դործերով կը զբաղէր, սուղ սակերով դրամ փոխ տալով նեղը մնացած չքաւորներու, զորս կը

կելքէր աներեւակայելի շահագործումներով: Իր վարդապետն քով, Բարսեղ կամայ-կամայ ընտելացաւ գրամ վատակելու: զազանիքներուն, և զբաւելով վարդապետն համակրութիւնը իր ամբար աչքըացութեանը և օրինակելի գործունէութեանը համար, կրցաւ քիչ-շատ գրամ աւելցնելու ալ սխիլ, որովհետեւ ծերունի վաշխառուն՝ որչափ ալ անուն հանած կ'իծի ու զրամագոյշաւ, գոհացուցիչ շարժականով մը կը վարձարէր իր աշխատութիւնները և ջանքերը, տեսնելով որ անոնց երեսնէն ինք ալ կը նախատարուի բացառիկ յաւելումներով իր ընթացիկ շահերուն վրայ: Ու քանի մը ատրի ետքը, երբ Բարսեղ տեսաւ որ ա'լ կրնայ ինք իր գլխուն գործ մը զարձակել իր խնայողութիւններով, զորս հապուցած էր բաւականաչափ գումարի մը, որոշեց վարդապետն քովէն ելլել, և առանձին իր հաշւուն գործ մը բանալ: Ու բաւական մեծ գծկամակութիւններէ ետքը, վարդապետն հրաման տուելով, ձեռնարկեց ինքնագլուխ գործի մը, ինք ալ իր կարգին սենեակ մը բռնելով, հին, անշքացած, վիզիկած խանի մը մէկ խորշը, — սրպէսզի վարձքը աման ըլլայ, և իր անսիրտ շահատակութիւնները թաղուին աչքէ հեռու մթաութեան մը քողածածուկ խորքերուն մէջ: Անյաջողութեան մը վախը չէր վրդովել զինքը, և չէր խափուել ապագայի մտովն ո՛ր և է ապրտամ անստուգութենէ: Ընդհակառակը, ճարպիկ, աչք-բաց, հեռատես ու խորամանկ սղայ, իր քայլերը անձնավատահ էին ու հաշուած, մանաւանդ որ աղէկ իւրացուցած էր վարդապետն անողոր շահախնդրութիւնները, որոնք իր մէջ սպաննած էին սիրտի զգացումներուն ամէնէն վերջին բարախումներն ալ: Աս չորթեց, ան կուղտեց, վարդապետն յաճախորդները գողցաւ, և քիչ ատենուան մէջ Բարսեղ շինեց զիրք մը ու զիւրեց զբամազլուխ մը, որ ալ կը խոտտանար խոտալ յաջողութեան առաջնորդել զինքը, և ո՛ր և է կտակած ու վախ չէր ներշնչել իրեն: Գործը հետզհետէ ընդարձակելով, հրապարարակին վրայ ալ ճանջցուեցաւ անունը, ու հիմա իր ստորագրութիւնը կը բռնուէր բաւական նշանակելի գումարներու համար: Բայց, հետեւելով իր քողաքայլներուն նախնական աւանդութեան մը, և զերծ ըլլով իր քողաքայլներուն նախնական խոտալ խոտալ, մութ ու թշուառ իր սենեակը, ստով մեծ գաղափար մը չապաւ համար նաեւ իր հարստութեանը վրայ, սրպէսզի իր վրայ չտեսնէ հանրային անկալութիւններ ու չստիպուի բացառիկ շուայլանքներ ընել: Իր կեղեւին մ'ջ ամբողջութեամբ, երկնա խղունժին պէս դլուխը ներս, սեղմ ու կաշկանդաւած ծախքով մը կ'ուզէր որ ապրեր, և միշտ ահաբեկելով հարուստի անուն հանելու սոսկումէն և սենեցած զբաման քանակին վրայ գաղափար ներշնչելէն, չուզէր խել ամբամանալ, երբ ժամանակը եկաւ ու կ'անցնէր ալ: Չէ՞ որ առով սկիտի կնիթարկուէր նորանոր անպատ ծախքեր ու, ազգականներու թիւ մը սկիտի աւելցնէր իր շուքը, որոնք

ամենը մէջ-մէկ թախանձանք պիտի ունենային իրմէ, պիտի կողոպտէին զինքը, օր-օրի իր հարստութիւնէն կրծելով սրտառանք: Կրնա՞ր հանգուել Ռարսեղ — հիմա Ռարսեղ աղա — քաղաքացիի այս կեանքին, և իր սիրար պիտի կրնա՞ր տակալ, երբ տեսնէր որ չոր ուտելու իր զբիւսնքներովը դիպած գեղին աղւոր սակիները մէկիկ-մէկիկ կ'երթան օդացին պերճանքներու և վասնումներու գաղբ: Կարգուելով, կինը պիտի գլխարկ ուզէր. հաւի, սագի հնչին փետուրներով ու պողպատ-ճառանցին ու բանջարանացին կանանկեղէններովը կազմուած անօգուտ փունջի մըն է որ պիտի տար ինք կարմիր փաղիւռն իր սակիները, որոնց փայլունները դատ, ա՛ փայլները դատ, ծակերը դատ, անծախները զտա շարքերու դնելով՝ դուրգուրա խնամքով պահած էր դրամարկ-դին մէջ-մէկ դադա՛նածածուկ խորշը, մատաղին փռէին մրտա՛ծ սեւ ատրակներու մէջ: Ձէ՛, Ռարսեղ աղա չէր կրնար սիրտ ընել՝ առանկ մխտաններու: Ասոր համա՛ր է որ ուզեց արխանալ ամուսնա՛տէ հրա-ժարելու՝ գաղափարին առջեւ, երբ ընկերային ու ֆիզիքական այդ պէտքը իր անստատ տոբալումը կը զգացնէր առաջացած իր տարիքին վրքոտ վայրկեաններու: Ու չամուսնացաւ, նախընտրելով չոր-գլուխ, վնք իր պատեանին մէջ հանդիստ ապրել, իր սակիներուն գլուխը իր պահապան հովանին տարածած, քան ենթարկուիլ անա՛նկ տաղաւակներու, որոնք ամէն բանէ աւելի իր սակիներուն ցեցերը պիտի ըլլային: Խրա-չելով ու անախելելով միշտ շուրջ ծախքերէ, Ռարսեղ աղա չբաժ-նուեցաւ նաեւ խանին սենեակի իր անկողինէն, զոր առջի օրուքնէ փռած էր հոն, և զոր ինք կը վերցնէր, ինք կը փռէր, մէկ-քանի ամիսը մէջ մը հազիւ լուացքի տալով, երբ ալ բարձին երեսները մուրի պէս սեւցած կ'ըլլային ու քիչ մը հոտելու սկսած: Խանի այդ մութ սենեակը, թէ՛ դործատեղին էր թէ՛ տունը, և շատ անգամ դուրսը չուտելու համար, իր կերակուրն ալ հոն կ'եփէր, ձեռքովը, սոխ ջարդե-լով, միս կարելով, աման լուալով դուռին բերանը երկնցող նրճանքի մը եզերքը, երբ դոր՛է՛ դարձած կ'ըլլային մարդիկ, խանը սրբաբուած, ու զինքը տեսնող մը չէր կրնար ըլլալ արդէն անչէն այդ խանին վեր-նայարկի թափուր ամայութիւն՝ երուն մ,ջ: Եփելիք կերակուրին պատ-քառաութիւնը կարգի դնելէ, միւր բանջարեղէնը ամանին մէջ թափելէ ու աղը-սղաղը վրան ցանկէ կտրք, կռտանի պղտիկ կրակարանը ներս կ'առնէր, երկաթ դուռը կռնակի վրայ կ'ընէր, կը նստէր ծալա-պատիկ՝ բացարձարձ կրակին դէմը, կը հանէր տուփը դրպանէն, խնամ-քով սիւսու մը կը սլորէր, ծխախոտի ինկած թելերը ժողկելով ու տուփին մէջ տեղաւորօնելով, և լուցիկ չվտա՛ ելու համար զայն կրակէն վտռելով, կը մխտցնէր վառարանէն արձակուած լոյսին դէմ, խոխով իր յաջորդ օրուան և աւելի միւս օրերու դործերուն վրայ, ծրագրո-նէր յօրինելով միքին մէջ, մէկուն հաւնելով միւսին չհաւնելով: Սի-

կառը քաշելէն յայտնի կ'ընէր Բարսեղ աղա թէ՛ այն օրը գործը յա-
ջող ու շահաւէտ գացած էր թէ ոչ, որովհետեւ աղէկ շահ մը ըրած
օրը կուշտ ու կուռ ներշնչումով մը կը կլլէր մութը սիկտան, մինչեւ
աղիքներուն խորը քաշելով, մինչ անցած օրուան մը իր ծխաքա-
շութիւնը ա'յնչափ ակործով չէր ըլլար, կը քաշէր ծուխը ու քիթին
տակէն կը փչէր դուրս, դժգոհ ու սրտնեղած արձամարհանքով մը :
Մինչև կերակուրին եփիլը՝ լոյս չէր վառեր Բարսեղ աղա, բաւականա-
հալով կրակարանին արծակած աղօտ ու չքոտի լոյսով, որ սենեակին
անիւլանները կ'ստեղծէր տարտամ ցոլքերով, հոն ուրուադրելով քմածին
ստուերներ, ուր իր պղտոր դիմանկարը կը խաղար, հսկայ, այլակերպ
շուք մը ձեւացուցած պատի'ն վրայ : Ուշ ատեն կ'աւարտէր կերակուրին
եփիլը, որ սենեակը կը լեցնէր զոլորչիկ ամպով մը և անախորժ խառնակ
հոտով մը, կերակուրին տեսակին համամատ : Այդ վիճակին մէջ, դուռէն
ներս մա'ռիկ մը քիթին շատ դէշ պիտի դարձնէր աչդ հօտը, բայց սեն-
եակին յաւիտենական բնակիչը երկար տարիներու մէջ վարժուած ըլլա-
լով աչդ մթնոլորտին, չէր գզար անգամ հօտը, որ գիշերէ-գիշեր կը
տարածուէր իր խցիկին քարակերտ հաստ ու կամարակապ պատերուն-
տակ, և որ շատ անգամ մինչև հեռուներ' ալ կ'երթար, երբ երածը
լուսիկալ կամ խորոված մակէնի պէս կերակուր մը ըլլար : Կերակուրը
երբ եփէր, Բարսեղ աղա վար կ'առնէր գոյն, սանին կղերքներէն ձեն-
ճոտ ու սև սքիթէ երակ բանած, և ձգելէ ետքը որ քիչ մը պաղի, մէկ
մասը սնանի մը մէջ կ'առնէր, կը դնէր ծածկոցի մը վրայ, և մօտակաջ
խորչէ մը վար տանկով հացը, գզալը, պատառաքալը, կ'անցնէր
գլուխը, կ'աւտէր լիպապուրդ ակործակով, ուշ ատեն ա'լ աւելի ան-
թեցած, և ձեռքովը երած ըլլալուն համար աւելի' համով գալով կե-
րակուրը քիւքին : Կերակուրին ու աւելցած հացին մնացորդը պատին
վրայ փորուած դարանի մը մէջ կը պահէր Բարսեղ աղա խնամքով, յա-
ջորդ ցորեկը ու իրիւրնն ալ անով անցընելու համար : Արդէն մէշս
չափէկ կ'եփէր կերակուրը, որպէս զի եր'աւ օրը անգամ մը միայն
զբաղի անով, և այգալէսով թէ՛ խնայողական ըլլայ ուտեստը, և թէ՛
օր ընդ մէջ ալ, կարենայ գիշերները տեսարանները և հաշիւները նայիլ,
տանելիք-տալիքները արձանագրելով, շտհածին վաճառածին հաշուելիւնը
ընելով, ամէն օր գիտնալու հաճոյքի' համար թէ ո'րչափի հացուցած
է հարստութեանը գումարը : Հետաքրքրակա' էր տեսել զինքը մութ
գիշերուն, անցած գրասեղանին գլուխը, առջեւը ամբոյն հողեւարք
լա'թար մը, գլուխը հա'րած տեսարաներու դէպի' վրայ, երբեմն խո-
ժու, երբեմն ժպտուն ծամածռութիւններով բան մը մէկ տեսարանին
մէջ գրելով, բան մը միւսին մէջ, ազդեւած գրիչին տակ եկող թուա-
նշաններուն հողերանութենէն, քանի որ ա'նցմէ մէկը լիառատ շահ
մը կը ներկայացնէր, և ուրիշ մը անտեղի, անտեղիս, չգուշակուած

Մեռա մը: Բարսեղ աղա իր գիշերային աշխատութիւններու այդ վայր-
ձեաններուն, ճշմարտագէտ կ'ապրէր թուանշաններուն հետ, կը ճաշակէր
մինչեւ հոգիին խորը անոնց առթած հաճոյքը կամ դառնութիւնը, և
անոնք իրեն համար մէջ-մէկ կենդանի խորհրդանշաններ, անմարմին
ձեանքեր էին՝ որոնք կ'ապրէին, կը խօսէին, և շատ բաներ կ'ըսէին
իրեն, իր ներկային ու ապագային համար: Մինչեւ կէս-գիշեր, մինչեւ
օրուան հաշիւներուն լմնալը՝ կ'աշխատէր Բարսեղ աղա խորհրդաւոր
քուտիւնէ մը մէջ, և երբ ա'լ աչքերը ծանրանային ու քունը ընկճէր
զինքը, կ'ելլէր վար առնել անկողինը անյայտ բարձրաւանդակէ
մը, ուր կը պահէր աչքէ գերծ ըլլալու և վրան խօսք չբերելու
համար, և փռելով սեղանին քովը մաքուր աւլուած տախտա-
կամածի քառակուսի պատառի մը վրայ, կը հանուէր, ճրագը կը
մարէր, կը խաչակնքէր ու վերմակին տակը կը մանէր, կանոնաւոր
քաբար, ամառ-ձմեռ, ասոնց օր մը բացակայելու սննտակէն, նախ
անոր համար որ չէ'ր կրնար իր դրամարկը վստահիլ առանձնութեան,
և երկրորդ որովհետեւ հեռու կը պահէր ինքզինքը բարեկամներէ ու
ծանօթներէ, ասոր մէջ անսնելով դրամ վստահելու վտանգ մը, որուն
գաղափարէն իսկ կը ջատուէր ու կը սոսկար:

Կիրակի օրերը նոր հաճոյք մը ու կազդուրիչ փոփոխութիւն մը չէին
գերեր Բարսեղ աղաի կեանքին մէջ: Գործերուն յաջողութեանը համար
եկեղեցի աղօթելու կ'երթար միայն կիրակիները, միշտ աճապարելով
որ շուտ դառնայ, և վերադարձին, չարաթ օրուան թերթ մը առնելով,
կուգար բանալ խանին իր սննտակը, և առանձնանալով նըրանցքին վրայ
քացուած գետնին մօտ երկաթ վանդակորմերով պատուհանի մը առջեւ
փռուած բազմոցի մը վրայ, ուր ծալապատիկ կը նստէր ու ատանկ
հանդիսաւ կ'ըսէր, մինչեւ իրիկուն կը կարդար թերթը մէկ ծայրէն
միւսը, մինչեւ ծանուցումներուն վերջը, թէ՛ որպէս զի տեղեկանայ
քոլոր լուրերուն և բան մը կորսնցուցած չըլլայ, և թէ՛ տուած դրամը
արժանապէս գործածած ըլլալու համար:

Բարսեղ աղա՛ կեանքը կ'անցնէր ասանկ, տարիները կը յաջորդէին
իրարու, դէպի ծերութեան ասիմանները փոխադրելով զի՛քը, և ինք
ո՛ր և է սրանդուլութիւն ու տուայտանք չէր թուեր ունենալ: Գանկը ար-
դէն սկսեր էր ճաղատիլ, ու քամակը ձեւացուցած էր զգալի կորու-
թիւն մը, որ կը հարկադրէր զինքը գլուխը դէպի կուրծքը ծուռ քա-
լել: Կը ճանչնային զինքը դուրսը, երբ պատահաբար ու հազուադէպօ-
քէն կ'անցնէր փողոցէ մը: Մարդիկ իրարու կը ցուցնէին անոր անցքը,
միշտ խոկուն և ինքն իր մէջ՝ սեւեռած գաղափարի մը, որ տարտամ,
անկապակիջ շարժումներ ընել կուտար իրեն: Գրեթէ ինքն իրեն կը
խօսէր Բարսեղ աղա ճամբան, մատները բանալ դոցելով ապշահար,
կրքոտ շարժումներու մէջ և անհասկնալի ծամածռութիւններ ընելով

դէմքովը, աչքերը բանալով զայրացկոտ դիմադժութեան մը մէջ: Ատիկա կը նշանակէր թէ անել զորձ մը ունի ան այդ օրը, որուն կողք չկրնար քակել սուանց վնասի կամ սուանց յազկեցող շահի և որ զինքը կը սրտնեղէր անօրինակ դատնութեամբ մը: Իր կծծի ու դրամապաշտ մարդու համբաւը ծանօթ ըլլալով, զինքը ճանչցողներ չէին զարմանալ իր այդ որոտաւոյ վիճակին վրայ: Քնքնածաղով մը կը զխտէին ու կ'անցնէին, երբեմն նոր դէմքերու մասնանշելով զայն ու ծանօթացնելով հետուէ-հետու. — «Բարեւոյ աղան է. ի՞նչ դրամ կայ քովը, կծծի է ս'ը, տեսնալիք բան. բեռնակիրին չօժարած կեանքովը կ'ապրի: Մարդ տէր մըն ալ չունի. որի՞ սկիաի ձգէ կծիկներով դիզած հարստութիւնը»:

[Յաջորդով]

ԵՆՈՎՔ ԱՐՄԻՆ

ԽՈՅՈՏ ՀՐԵՇՏԱԿՆ

(ՀԱՐՍՆ ԱՍՏՈՒԾՈՅ)

Վսեմագոյն նիչն հուր հասաւ երբ յերկին՝
«Ասուած, Ասուած ի՛մ, Է՛ր, բնդէ՛ր զիս քովեր»
Եւ—խորհուրդ մեծ—քովուց ըզճերն անսարբեր,
Միակ ֆերոբն՝ որ բսեղծուած էր հուր կին՝

Մուրին մեջ գալիս սահեցաւ սե՛ւ լեռն իջաւ,
Սե՛ւ պրսակին կիսեց փուռերն իր նակիսն,
Սե՛ւ գամերուն գրկսով փուռեց իր մարմին,
Եւ Յիսուսին փարսւ՛ծ, լացա՛ւ ու լացա՛ւ . . . :

Երբ իրենց աչքն զոր ցայցն լուսոց փոխ կուտան,
Հրեշտակք բացին, զարմանալով զարմացան.
Ո՞վ այդ խոցոս սերոբն հրաշխւ՛մ հրաշագեղ . . . :

Ասուածորդին անա յերկինս համբարձաւ.
Որպէս խաչին վրայ՝ զքրոյ փռն փարեցաւ . . .
Խոցոս հրեշտակն՝ հարսն Ասուծոյ էր անեղ . . . :

ԵՂԻՍ ՏԷՄԻՐԱԲԻՍԱՇԵԱՆ

ԱՐԴԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ

Թ Ե Լ Լ Ի

Ը.

Շէլլի՝ նախնական կրթութիւնը կ'առնէ Իթընի մէջ ու անկէ կ'անցնի Օքսֆորտ, ուր սովորոյն չափ կարճ միջոց մը միտոյն կը մնայ, որովհետեւ զեւ հաղկու տառնուեալքը տարեկան կը դրէ կրօնամոլ հայեացքներու զէմ ոգւով տեսարակ մը որուն համար կը վաճառուի Համալսարանէն: Բանաստեղծին համակերպելը յաւէտ կը դաստապարտեն համալսարանը, որ ա՛յլ քան խոտութեամբ վարուած էր սլետտնի ուսանողին հետ: Եւ իբրեւ ալ, որչափ կարելի է սեռնել՝ Շէլլիի այդ տեսարակը ո՛չ ահաբան համադրանքներու ս'ըջափ դադարեցնելու յայտարարութիւն մըն էր, ու կը պարտնշուէր կարգ մը արամբանական առաջադրութիւններ, որոնց մասին վիճաբանելու տաղարէզ կը կարգար իր վարժարանին ուսուցիչներուն, ի՛նչպէս սովոր էին ընել միջնագարեան դպրոցականները: Այս տեսարակին հրատարակութեան դադարեցնելու ալ վերջապէս մէկն էր ա՛յն բաղձալիւ անգործական կարծիքներէն, որոնցմով լեցուն էր իր գլուխը: Համալսարանին մեծահմուտ ուսուցիչները աչինչ բրին մեղանշող իր սխալ ճամբէն դարձնելու համար, դարձի բերելու իրենց մէթոսն էր արտաքուստ վարժարանէն: Ու այս արտաքուստին հետեւանքը ու՛ր կըզու որ տառնուեալքը տարեկան այս պատանին այլեւս իր գլխուն ճարը գտնելու զիրքին մէջ նետուեցաւ, Գրիտտնէութենէ արդէն իսկ օտարացած իր միտքը հիմա բոլորովին դաժնացած անոր զէմ:

Ու այսպէս աշխարհ նետուեցաւ Օքսֆորտէ արտաքուստ այս սուտանին՝ բարկութեամբ լեցուն սիրտով մը, յեղաշրջումով եռուելիող միտքով մը, և նկարագրով մը որ զուրկ էր ինքզինքը կառավարելու կարողութենէն և անտեղեկ էր կեանքը ու իրերը վարող օրէնքներուն: Այս ա՛յնպէս ըլլալով ուրեմն, դարմանալի չէ՝ որ սխալեցաւ, այլ դարմանալի է որ աւելի չարացար չի սխալեցաւ: Համալսարանական օրերէն սկսելով ապրեցաւ ի՛նչ որ քարոզեց, այսինքն փոխութիւն՝ կ'ամբի հարցերու մասին ընդունեալ կարգ ու սարքի: Մարդկային իրերասիրութեան դադարը տառականապէս կը գործողքէր իր անձին օրինակովը. ո՛ր և է մարդու հետ կը վարուէր եղբայրական սկզբունքով:

Անգլիական գրականութեան մէջ նմանը դրժէ չի տեսնուած արտադրութեամբ բարձրացաւ Շէլլիի հանձարը ու հատու բանաստեղծութեան մէջ բարձրագոյն յաղթանակներու: Տարիէ տարի կը գարշանար իր ոճը՝ մարքութեան և խոտութեան մասին: Իր լաւագոյն գործերը կը նկատուին Prometheus Unbound, Adonais, The Cenci և Epipsychidion:

Առաջինը համարուած է արդի անգլիական բանաստեղծութեան ամէ-

Տէկն ուժեղ և վեհ արտադրութիւնը, առանց ո՛ր և է տարակոյսի: Անհատատրեի քերթուած մը՝ յղացումով, ռճով և արուեստով: Գրուած է Խաղիայի մէջ, ուր արդէն դրուած են Շէլլիի գրեթէ բոլոր ազուր գործերը, և հեղինակը իր ներշնչումը ստացած է այդ գեղեցիկ երկրէն: Շէլլի արդէն ընտրութիւնը սիրող մը, սրաշատ մըն էր կամուխէն. իրեն համար ընտրութիւնը գեղեցիկութեան հոգին էր, և կը պաշտէր զայն հիացիկ հաւատարմութեամբ: Եւ իր այս գործը ինք իր մէջ կը պատկերացնէ գեղեցիկութեան աշխարհ մը. բաներու խափանն ներառութիւն մը և երաժշտութիւն մը սկսբւած է այս քերթուածը:

Adonais² ողբերգական քերթումած մին է, զբռնած իբր լարեհամբու-
նառանկարի Քիլյեի բահտումը առթիւ: Իսկ Epipsychidionը նոյն իսկ իբր
ամէնէն խիտ լինող լինող քննադատներուն կողմէ հաշակուած է «սիրելիքքի մեծա-
դոյն սիրտին քերթումածը»:

Իր այս երկարաշունչ քերթութեանքէն դուրս, Շէլլիի ամէնէն շատ կարգացուած ու սիրուած կտորն է Ode to a skylark: Այս գողարիկ կտորը Զերմապէս կարգալ կը յանձնարարեմ անդլերէն լեզուին ո՛ր և է չտալով հմտութիւն ունեցողներու: Գեղօն մըն է ան զոր կը ճանչնան քիչ շատ անդլերէն գիտցողները. դատաւորքէ դատաւիրք օրինակուած է այս վերջին հարիւր տարիներուս: Եւ եթէ կորսուէին Շէլլիի միւս բոլոր գրածները, տարակոյս չկայ թէ ծանօթ թուչունին՝ արտայայտն ուղղած իր քերթութեամբ բաւական պիտի ըլլար տեղ մը տալու իրեն՝ չարքին մէջ քնարերգակ մածագոյն բանաստեղծներուն, որոնք անդլերէն լեզուն գործածած են տիրականօրէն և ներդաշնակօրէն: Այդ քնարերգական կտորին մէջ բանաստեղծը անգամ մըն ալ կը յայտնէ բնութեան մասին իր ունեցած սրէշտումը: Ներդաշնակութեան կատարելութիւն մը կը հոսի ամէն մէկ տողէ, ու մարդուն հոգին կը զգածուի սրտատուչ արտութենէ մը, որ կը բզկիչ բանաստեղծին սիրտէն, որ ինչպէս ըսինք ասկէ առաջ՝ միշտ զեղուն և զեւուրն է ըզճանքներով, յուսահատութիւններով և անբաւականութեամբ:

Դժա՛տ ընտանիքն է որ Շէլլիի բանաստեղծութիւնը ցոյայնէր իր կեանքին տիրութիւնը։ Բայց զխտելի է որ, տարիքը աւանդուն հետ՝ իր միտքը աւելի հա՛ղարտ և յուսալից բնութիւն մը առաւ և թէ թերեւս շատ շիտակ չըլլայ («տարիքը առնել») բացատրութիւնը գործածել իրեն համար, որ երեսուն տարեկան կը մօռնի։ Անխարելի է դուշակել թէ ինչէ՛ր կըրնար տակաւին արտադրել այս զարմանալի միտքը, եթէ աւելի երկար կեանք մը ունենար։ Բայց իր ճակատադիւրն էր երիտասարդ մօռնիլ․ մեռաւ՝ երգը չրթունքին վրայ։ Եւ կարծես նորութիւններ, այժմեաւ կութիւններ սիրողի մը յարմար—թէեւ յղբայի—վերջաւորութիւն մը կ'ունենայ նաեւ իր կեանքը։ 1822ի յուլիս 8ին՝ Խաղաղկան կողքէ մը նստակ կը նստի բարեկամի մը հետ ծովային սրտոյս մը վայելելու համար։

Ծովին վրայ հազիւ քիչ մը կը բացուի նաւակը և ահա սուկալի մըրիկ մը կ'ելլէ, կը զարնէ նաւին, և ցամաքէն նայող անձկուս աչքեր չեն կրնար բան մը տեսնել փոթորիկին մէջէն: Երբ սակայն մթութիւնը կը փարատի, նաւակը այլևս չէր տեսնուեր: Քանի մը օր վերջը միայն կը գտնուի Շէլլիի դիակը, ձեռքին մէջ տակաւին պինդ բռնած Քիցի հատորը, զոր կը կարդար մահը վրան հասած պահուն: Իր մարմինը այրեցին, Պայրընի և Լէյ Հընթի ներկայութեանը. ու բոցերէն անջնառ դուրս հանելով սիրտը՝ զրկեցին Տիկին Շէլլի: Աճիւնները թաղուեցան Հոտմի անդլիական գերեզմանատունին մէջ, ճօն Քիցի մօտիկը: Այսպէս, ճակատագրին ուր՝ բշտկանութեամբ, սառնմունքը ամուսան միջոցին Շէլլի զնաց պատկիլ քակիլը անոր, որուն կեանքը փառաբանած էր իր մէկ գործովը, որ ինչպէս տեսնուր՝ անդլիական լեզուին ամէնէն հիշատակ ողբերգութիւնը նկատուած է:

ՏՕՔԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՀՐԱՅՐՔԻ ՓՐՓՈՒՐ

Հեռանի վառ բորբոնում մը սիրային,
Թաւոն կիւրի հպանցումները անհուն,
Փրփուրի պէս հոգիես դուրս կը հոսին,
Արին նրման ներմակ, անգայտ շուրերուն:

Շամբանեայի գաւաթի կը նրմանի,
Իր վիժանուտ կոհակներովն անմարմին,
Ան, մօտեցուր շրունքներդ ծիրանի,
Փրփուրները դեպի գետին կը ծորին:

Բորբոնումին վայրկեանն է առ դիպական.
Քիչ մը վերջը ծիր մը փրփուր չի մնայ
Թեքես աչս խօլ եռացումէն հոգեմնայ.

Տե՛ս, լամբաբար կը խաղաղի կ'իջնայ ան.
Կամաց կամաց ձիւնին բուրգը կը հալի.
Ան, մօտեցու՛ր շրունքներդ հեռային.

ՄԵՐՈՒԺԱՆ ԳԱՐՍԱՄԵԱՆ

Ինչպէս պէտք է դիտած բլլան ուշիմ ընթերցողներ, Մասիսի նախորդ քիւով նրասարակուած ժամանակէն բանաստեղծութեան մէջ ակամայ սպրդած են քանի մը սպագրական սխալներ, զորս պէտք կը հետեւեմ ուղղել բացառապէս: Տող 1. Réponse կարդալ Réponse: Տող 4. supprimer կարդալ supposer: Տող 5. pouvoir կարդալ pouvez: Տող 12. puı կարդալ qui:

Վ Ա Խ Ը

Լուիզոն և Ֆրէշէրիք դպրոց կ'երթան, գեղին ճամբէն: Արեւը կը մպտի ու եր'ու աղաքը կ'երգեն: Անոնք կ'երգեն, սովածին պէս, որովհետեւ անոնց սիրտը՝ ախտակին պէս զուարթ է: Կ'երգեն հին երգ մը, զոր երգած են իրենց հանդիները, երբ պզտիկ աղջիկներ էին, և զոր պիտի երգեն, օր մը, իրենց զաւակներուն զաւակները, որովհետեւ երգերը պզտիկ անմահներ են, և դարերու ընթացքին մէջ՝ կը թռչտին շրթունքէ-շրթունք: Շրթունքները՝ օր մը գունատած՝ կը լսեն մէկզմէկու ետեւէ, և երգը կը թռչտի շարունակ: Երգեր կան՝ որոնք մեզի կուգան այն ժամանակներէն՝ երբ բոլոր էրիկ-մարդիկ հօտաղներ էին և բոլոր կիները հովուհիւնէր: Ասոր համար է որ անոնք միմիայն ոչխարներու և դայերու վրայ կը խօսին:

Լուիզոն և Ֆրէշէրիք կ'երգեն. իրենց բերանը ծաղիլի մը բոլորչի բացուածքը ունի, և իրենց երգը՝ սրտառուչ ու յոտակ՝ կը սլանայ առաւան օդին մէջ: Բայց ահա, յանկարծ, ձայնը կը դադարէ Ֆրէշէրիքի կոկորդին մէջ:

Ի՞նչ անտեսանելի դժուրութիւն մը ուրեմն խեղդեց երգը դպրոցական աղուն կոկորդին մէջ:—Վախն է աղ: Ամէն առտու, գեղին վաղացին ծայրը, ան ճակատագրականօրէն կը հանդիպի խողի երչիճակաւաճառին շունին, և, ամէն օր, այդ տեսարանին՝ կը զգայ որ սիրտը կը սեղմուի և որունքները կը թուլնան: Սակայն, երչիճակաճառին շունը ո՛չ կը յարձակի իր վրայ, ո՛չ ալ կը սպառնայ: Ան հանդարտիկ մը նստած է տէրջը կրպակին սեմին վրայ: Բայց սեւ է ան և արիւնարբու և անթարթ աչքեր մը ունի. ու շրթունքներուն ծայրերէն դուրս կը ցցուին սուր ու ճերմակ ակօսանք: Սոսկալի՛ է: Ան նստած է ջարդուած միւսերու և ամէն տեսակ յօշաճներու մէջտեղը: Այդ գիրքին մէջ՝ ա՛լ աւելի սոսկալի երեւոյթ մը կ'առնէ ան: Յայտնի բան է թէ՛ ինք է՛ գործած բոլոր այդ նախճիրը. բայց ան՝ կը տիրապետէ հին: Վայրագ դադան մըն է երչիճակաճառին աղ շունը: Ասոր համար, Ֆրէշէրիք հեռուէն նշմարածին պէս կենդանին՝ նստած սեմին վրայ, խոշոր քար մը կը վերցնէ, հետեւելով օրինակին այն մարդոց՝ որոնց նոյն կերպով զինուիլը տեսած է՝ խածան շուներու դէմ, և երչիճակաճառին տունին հանդիպակաց պատին քսիւսուելով՝ կը քալէ կ'երթայ:

Այս անգամ ալ, նոյն բանը բրաւ ան: Լուիզոն ծաղրեց զայն: Բայց չըսաւ այն տեսակ բիրտ խօսքեր՝ որոնց սովորաբար կը պատասխանեն ա՛լ աւելի բիրտ բառերով: Ո՛չ, բա՛ն մը չըսաւ անոր. ան չգողերեցաւ երգելէ: Բայց ձայնը փոխեց, և սկսաւ երգել ա՛յն ատուհան ծաղրական շեշտով մը, որ Ֆրէշէրիք մինչև ակամջները կարմրեցաւ: Եւ, իր պղտիկ գլուխին մէջ՝ մեծ յեղաշրջում մը տեղի ունեցաւ: Ան ըմբռնեց

թէ, պէտք է ա'լ աւելի վախճալ ամօթէն՝ քան վատնդէն: Ու վախճա'ւ՝ վախճալէն:

Անանկ որ, երբ, դպրոցէն արձակուելուն, տեսաւ նորէն երշիկա-վաճառին շունը, անվեհեր ա'ցաւ՝ կենդանիին առջեւէն, որ զարմացկոտ կը մնար:

Պատմութիւնը կ'ըսէ թէ, Փրէտէրիք աչքին ծայրովը դիտեց որ Լուիզոն կը տեսնէ՞ր զայն:

Շատ ճիշդ պիտի ըլլար ըսել որ՝ եթէ աշխարհի մէջ կ'ընէր ու աղ-ջիկներ չըլլային՝ մարդիկ նուազ քաջ պիտի ըլլային:

ԱՆԱԴՕԼ ՖՐԱՆՍ

Անճանօթ մը չէ Ճանի'լ Եղըճեա'ը, այն բանաստեղծը, որ 1886ին մեռաւ, երկասարք տարիքի մէջ, այնքան սիրուել յաւցնելով:

Le Parnasse գրողին ամաթերթին բանաստեղծական մրցումներուն մասնակցած և մրշա չափով է առաջնութիւնը: Հետեւեալ բանաստեղծութիւնը, որ պլաիկ դադափար մը հաղիւ կուտայ Եղըճեանի տաղանդին վրայ, հրատարակուած է 1882ին և ուղղուած սիրուն bruno'ի մը:

Ա Ն Ո Ր

Ձե', նոյն խի օր մը, փայտ's հուրիս,
Երբոր այլուրի նամբորդ մ'ըլլամ ես,
Եւ երբ նախանձոս բաղդը ճնշե՛ գիս,
Իր ձեռնովն անեսս,

Ու երբ լսիսպուիմ ըզգալ դառնօրէն,
Կրիլը գլխուս եւ սրունքներուս,
Պիտի յիշեմ քեզ, պատշելի'ս, նորէն,
Կեանքիս մեջ անյոյս:

Անձկոս պահերուս, կրնայ ըլլալ որ,
Ձիս ծընող մայրը անիծեմ յանկարծ,
Հայնոյեմ բաղդիս, կոյրի սլեւ մոլոր,
Իայց ո'չ սերդ անանց:

Ձի սերդ հաւա'sն ե, աղջի'կ բխահեր,
Ու յոյսը միակ, զոր ունիմ ես հոս,
Այս մուր կեանքին մեջ, ժգոյն, փառութեւ,
Ուր կուլամ անխօս:

Թարգմ. Մ. Պ.

ՃԱՆԻԿ ԵԱԶԸՃԵԱՆ

ԻՆՏՐԱԻ ՆԵՐԱՇԽԱՐՀԸ^[1]

Հնդկերասիան չըջանալի մէջ նոր անձի մը, գրական հրապարակին վրայ նոր գրքի մը երևումը ուշադրութիւնները իրենց կը հրաւիրեն. այս պէս, կը քննուին, կը դատուին անոնք իրենց զանազան երեսներէն, և ամէն ոք իր կարծիքը կը յայտնէ իր ըմբռնման տեսակետէն:

«Ներաշխարհ»ն ալ, իբրև նորեկ գիրք մը, իր քննադատները ունեցաւ. զանազան օրաթերթեր և հանդէսներ զբաղեցան անով: Անոնց մէջ ստիպոյն երեւցած քննադատութիւնները, առ հասարակ, կարելի է վերածել քանի մը խօսքի. «Ներաշխարհին հեղինակը իրաւունք չունէր նոր բառեր չլինելու. «Ներաշխարհի ոճը խրթին է»:

Անշուշտ անկարելի էր կէտեր չեն տառնք, բայց գիրքի մը հիմը չեն կաղմոր: Օտար լեզուով գրուած գիրքի մը բառերն ու ոճը խրթին ըլլալէ աւելի բան մըն են, անհասկանալի են նոյն լեզուին անդէտ մէկու մը, բայց այս կերպ անհասկնալիութիւնը, խրթնութիւնը բան մը չեն պակեցներ գրքին արժանիքէն: Մտնաթ լեզուով գրուած գիրք մըն ալ խրթին կրնայ ըլլալ, երբ մանք ընտելացած չըլանք անոր բառերուն, լեզուին, խմատին: Այսպէս է նաեւ երաժշտական կտորի մը համար, որուն արժանիքը երբեք չէ կարելի ուղղակի համեմատել անոր հասկնալիութեան հետ: Եթէ հասկնալիութիւնը չափէր մտային բարադրութեան մը արժէքը, ներքին արժէքը, շատ մը օրէնսանբու և գրքերու համար սա անհեթեթ կարծիքը յայտնել պէտք պիտի ըլլար թէ՛ անոնք քանի մը տարուան մէջ արժէք տալոյն գինիի պէս, իսկ, ուրիշներու համար՝ թէ՛ մէկ օրէն: Ինչպէս կորուսին իրենց ներքին առաւելութիւնները: Ամէն ուշադիր կարդացող գիտէ թէ՛ նոր հեղինակ մը այնքան գլխաւ չկարդացուի որքան այն որուն ընտանեցած է ինքը, կարդացողը. այս բանը ճիշդ է նաեւ առաջին անգամ կարդացուած գրքի մը համար: «Ներաշխարհ»ը խրթին է, այսինքն շտապաւ չկարդացուի, ինչպէս մարդ իրեն

[1] «Ինտրոս»ի «Ներաշխարհ»ը գրական աշխարհին մէջ արթնցուց տարբոյզ գատաւառանձնեւ հետմեք մը: Արամ Նիկողոսեան, համեմուն վարժարանին ճնթէնը՝ Բերա, մօտէն չփութի մէջ «Ներաշխարհ»ի հեղինակին դադարաւորներուն, կեանքին ու գրախոսութեանը հետ, «Ինտրոս»ն ու իր գիրքը կը վերլուծէ իր կարգին, իր դատաստանին, համալումներուն ու աղւարտութիւններուն կռուանին վրայ: Կը հրատարակենք իր գրախոսականը՝ արհաւանդ եղած ըլլալու համար իր ալ գատաւառանձնեւ, և ծառայած՝ կարծիքներու անխափութիւնը յարգելու և գրողի մը այդ մտօլն ունեցած իրաւունքին լծմ ըլլալու մեր սկզբունքին:

արտասովոր ճամբու մը մէջ չքալեր անխոյժ և վարժ. ան չկարողաց-
ուիր վէպի մը, թեթեւ վէպի մը պէս, որուն վրայէն կ'անցնինք աւե-
լի քան կը կարգանք, ստէպ յապաւելով, շատ թափանցիկ սողերուն
վրայէն ցատկելով:

«Ներաշխարհ»ը խրթին է անոր համար որ ընտանի բառեր, ընտա-
նի ասացումներ, ընտանի իմաստներ չկան հոն. այսինքն թէ բառե-
րը իրենց դոյնը, անկիւնները մաշկեցուցած, ողորկուած բառեր չեն ու
շատերը կը կառչին մտքին. անոր ոճը ornère մը չէ ուր անհրաժեշտա-
բար սահմանադրուին մտքին սնիւնները, օրօրելով մեզ միօրինակ տա-
տանումներով և մեզ թմբեցունելով. անոր իմաստները չեն անոնցմէ
զոր կրնանք ականել, գտնել կամ ընդունել առաջին հայեցումով,
առաջին մտադրութեամբ:

Շատեր յուսախաբ եղան «Ներաշխարհ»ը կարդալով և անոր մէջ
չգտնելով «հասարակաց տեղիք» սիրաբանութիւններ կամ շատ ընտա-
նի սէներ, ահեր: Գիրք մը սակայն: — որ գիտութիւն մը ժողովգա-
ցնել չձգտիր — ժողովուրդի մը ամէն իտեղէն հասկցուելու պայմանը
լրացնել պէտք չէ ձգնի:

Դառնանք մանաւանդ բուն խնդրին, բառերուն, ոճին ու իմաստին
որոնցմով շարունակ է «Ներաշխարհ»ը:

Այսինքն անկարեւորէն, բառաշինութենէն:

Բոլոր արգելքները որ հանուեցան նոր բառեր չինելու դէմ՝ կը
ժողովուն սա առարկութեան մէջ թէ 1. ոչ ոք իրաւունք ունի ան-
հարկ բարդութիւններով խնդել լեզուն. 2. ոչ ոքի ներքի է քմա-
հաճօրէն, քերականական օրէնքներու զանցառումներով բարդել բառեր:
Այս վճիռը շատ խիտ է և համաձայն չէ իրականութեան: Եթէ
ժողովուրդը իրաւունք ունի բառեր չինելու — և այդպիսի բառեր սու-
կաւ չեն ու է գրական լեզուի մէջ — ո՞վ կրնայ զլանալ դրողի մը
իր զգացումներուն մէկ երանդը բացառող բառ մը կազմելու իրա-
ւունքը: Եթէ լեզուն արդի էր նոր բառերու չինութիւնը, սուրի է հա-
պա հոմանիշներու կամ երանդներ ձեռող բառերու կազմութիւնը ամէն
լեզուի մէջ: Այդօրինակ իստապահանջ լեզուն ինքը պիտի տուժէր
առաջին անգամ և շատ խեղճ պիտի մնար: Ասկէ դատ, ո՞վ է լեզուն.
մարդերուն չինած մէկ կուռքը որ հակառակ իր ծաւալի և վերացա-
կան դոյութեան, կը հրամայէ անոնց. երբ մէկը լեզուական աններ-
դութիւն մը քարոզել ուզէ, բոլոր պատասխանատուութիւնը անորմէն
էութեան մը վրայ կը թողու. այսպէս կ'ըսենք. «ժողովուրդը այսպէս
էութեան մը վրայ կը թողու. այսպէս կ'ըսենք» ևն. վարպետ հնարք մըն է աս կարծիք մը
նուիրագործելու, անոր տալու վաւերականութեան, հեղինակութեան
հովը որ կը պակսի անհատի մը: Այսպէս կ'ընեն նաև անոնք որոնք
սուրիքի մը կը վերադարձնեն այն գիտողութիւնը որուն պատասխանատու-
ութիւնը չեն կրնար ստանձնել շնորհաբար անձինքն իրար յայտնութեանը:

Արդէն ինչ հարկ որ նոր բառերը այդ աստիճան խորհեցնեն : Անոնք իրենց յատուկ կեանքը ունին և անոնց կեանքն ալ ենթակայ է կենսապայքարի և բնորոշեան (sélection) օրէնքներուն : Եթէ իրօք նորահար բառերը պէտք մը կը գոհացնեն լեզուին մէջ, անիրաւ է անոնց դէմ յարձակ'իլ, ջանալ զանոնք վիժեցնել . իսկ եթէ անոնք օրինական և գեղարվեստական կազմութիւն չունենալով չեն համարուածաւորուներ նաև իրական պէտքի մը, աւելորդ է անոնցմով երկար ատեն զբաղիլ :

Բառերը անոնելու է ոչ իբրեւ անձեռնմխելի էութիւններ, այլ այնպէս ինչպէս որ են . այսինքն գաղափարի խորհրդանշաններ, խմտորի ծառաներ և ոչ թէ գաղափարի տեսեր, պայմանադրական նշաններ և ոչ թէ յոռութիւն կամ բժշանքներ : «Ինորա» տիրաբար կը վարուի բառերուն հետ, զորս կը չաղէ, կը թրէ և կը կաղտաղաւ իր գաղափարներուն մէջ . և այս՝ սրբապղծութիւն մը չէ անշուշտ, որչափ է ինքնավստահ քանդակագործի գործ : Եթէ Ինորայի բառերը նորանշան են, պատճառը այն է որ այդ բառերուն ծնունդը աստղ գաղափարներու զուգորդութիւնները նորանշան են, և կամ, շատ անգամ այլօրինակ բարդուած բառերը նախադասութեանց խոացումն են : Հետաւոր գաղափարներու՝ մէկ բառի մէջ խոացումը մէկ կերպն է զրքին գլխաւոր կերպարանին . ակնարկիլ կ'ուզեմ հոծութիւնը : Եթէ բառեր կան որ նստադասութիւններ կ'արժեն, նստադասութիւններ կան որ պարբերութիւններ կ'արժեն, իսկ պարբերութիւններ կան որ ուրիշ կերպ գրաւելով էջ պիտի կրնային գրաւել, վաւելի գիրքն ալ ներաշխարհ մը կը խոացնէ : Ոճը բարդ է, ինչպէս իր շատ մը բառերը, որովհետեւ բարդ են արդէն այն գաղափարները և զգացումները, որոնք այնքան ուժգին կը ներկայանան, վստայի այնքան շատ են բացատրուելիքները, ըսուելիքները, պարզապէս կը յորդին անոնք, ուսումը, վէտիվէտ գաղով, գիրար գլելով, իրարու վրայէ անցնելով, փութորկած ծովու մը ալիքներուն պէս ամենի, անոնց պէս անտեղիտալի, անոնց պէս վայրենի կուգան ծեծել տիւր, կը մարին կը փշրուին, բայց անոնց փրփուրները զեւ աւաղին վրայ՝ ուրիշներ կաշմուած են արդէն : Արդեօք Յովուն անասանման և մշտակայ հոծութիւնը, անոր անտարակուսելի, անընդհատօրէն վայրենի ամենակարողութիւնը չէ՞ որ զայն կը կապէ Ինորային : Լեռնակուտայ՝ բուրդերուն և կոհալօրէն արձանացած վիթխարի ծովու մը ժայռացման խոտութիւնը չէ՞ որ կը սրացտէ Ինորա :

(Մնացածը յաջորդով)

ԱՐԱՄ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Այս օրերս Ֆրանսացի ծանօթ գրագէտ Էմիլ Ֆակե հրատարակեց գիրք մը՝ «Գրագէտներու Սերը» անուն, ուր շանեկան յայտնութիւններ կ'ընէ մտաւարական գործիչներու սիրային կեանքին վրայ։ Այդ գիրքէն «Մասինս»ի աշխատակից մը քաղած է ժողով Սանի եւ Միւսի սիրային կեանքին վրայ հետեւեալ շահագրգռական հոյր։

ԳՐԱԳԻՏՆԵՐՈՒ ՍԵՐԸ

ԺՕՌԺ ՍԱՆ ԵՒ ՄԻՒՍԷ

Ժօռտ Սան եւ Միւսէ («Լեւնտիկի սիրահարները») կը կոչուին, շարժական զբոսի ժամանակ անոնք սիրահարներ կ'ըլլան, սխալով Լեւնտիկէն։ Միւսէի եւ Ժօռտ Սանի թղթակցութեան հրատարակութիւնը՝ առաջին՝ կը ճշդէ կարգ մը կէտեր, մանաւանդ մէկ կէտ մը, որուն կը թուի թէ ահապէս կ'արեւարութիւն կուտար Ժօռտ Սան, երկրորդ՝ թոյլ կուտայ չափել ճշդութիւնը Ժօռտ Սանի Նէ եւ Նա վէպին եւ Բօլ ար Միւսէի Նա եւ Նէին։

Այս երկու տեսակետով եւ անոր վրայ աւելցնելով գեղարուեստական մեծ շահեկանութիւնը, այդ թղթակցութիւնը ունի՞ արժէք մը գրական պատմութեան համար։

Ժօռտ Սան եւ Ալֆր. ար Միւսէ իրար ճանչցան 1833ի զարման։ Ժօռտ Սան այդ թուականին կ'երեւայ թէ ուրիշ սիրահար ունեցած չէր բայց միայն ժխդ Սանտոն եւ կարճ ատեն մըն ալ Մէրիմէն. իսկ Միւսէ «ընթերցանութիւն եւ սրահանդէսներու» սէրեր միայն ունեցած էր, այն ատեն քսանընթերցաններէն էր Ժօռտ Սան իսկ Միւսէ քսաներէր։ Ժօռտ Սան Ինսիսիւսի եւ Վալանթիէն հրատարակած էր եւ Լեյխտին կ'աշխատէր. համբաւին լրութեանը մէջ էր։ Միւսէ իր բոլոր Առաջին Բանաստեղծութիւնները հրատարակած էր, եւ Ռօլլաի պատրաստութեան կ'աշխատէր. ինք ալ կատարեալ փառքի մէջ էր արդէն։ Մէկը եւ միւսը իրարու հանդէպ նախ եւ առաջ պարզ գրական բարեկամութիւն մը կարծեցին ունենալ. իրարու կը հաղորդէին իրենց գործերը։ Ինսիսիւսի կարգադրով Միւսէ Ժօռտ Սանի կը զրկէր այդ ընթերցումէն ներշնչուած ոտանաւորներ, Ռօլլաէն կտոր մը հաղորդելով անոր։ Իսկ Ժօռտ Սան Լեյխտին մէկ կտորը կամ առաջին խմբագրութիւնը կը զրկէր Միւսէի։ Այս վէպը կարդալով Միւսէ կը խանդավառի եւ իրաւամբ կը մտածէ թէ ասիկա առաջին դարձն է ուր Ժօռտ Սան հանձար զրած էր։ Այս ասիկա կը դրէ քիչ մը բրտօրէն. «Լեյխտին մէջ քսանի չափ էջեր կան որոնք ուղղակի սրտին կ'աղղկեն, անկեղծօրէն ուժգնօրէն, ամէնքը նոյնչափ գեղեցիկ որչափ Ռենէի եւ Լաւրի էջերը. ահա հիմա Ժօռտ Սանն էք, այլապէս պիտի ըլլայիք ասիկան մը որ գիրքեր կը չլինէ։ Ահաւասիկ լիբր գովաւոր մըն մը։ Ուրիշ քոմբլիման մը չեմ կրնար ընել։ Հանրութիւնը սխալ ընէ մնացածը»։

Սէրը չուշացաւ. առաջին անգամ Միւսէ ոիրահարեցաւ խիստ յայտնապէս. 1833ին ԺօռԺ Սանի կողմէ Միւսէի գրուած նամակները չկան, բայց Միւսէի նամակները անվիճելի կերպով կ'ապացուցանեն թէ Միւսէ եղաւ առաջին անգամ սիրահարող, թէ վարանեցաւ յայտնել իր սէրը, թէ սիրոյ յայտարարութիւնը ըրաւ կորմբելով, թէ ժամանակ մը ճամփուեցաւ և թէ յուսահատեցաւ:

Եւ յետոյ թղթակցութիւնը կը դադրի: 1833 յուլիսէն մինչև 1834 մարտ ոչ Միւսէէն երկտող մը ունինք, ոչ ալ ԺօռԺ Սանէն. Բարկոյի սէրերը, Փօնթէնպէօի սէրերը՝ սրանք այնքան ճոխ և մանրաղնին կերպով նկարագրուած են Նա եւ Նէի և Նէ եւ Նաի մէջ չեն կրնար սուսուռիլ Թորակցութիւններով: Այս սրահաղ յուսահատեցուցիչ է. կարելի է ենթադրել թէ ԺօռԺ Սան և Միւսէ ոիրահարեցան 1839 յուլիսին և յետոյ ամիս մը անյուշին Փօնթէնպէօի մէջ կամ աւելի ճիշդ ըսելով Ֆրանչուսի մէջ:

Ինչպէ՞ս սիրահարեցան. եթէ ԺօռԺ Սանի հուսատանք Միւսէ երկտուորդական առիւն և ըղձանք ցոյց տուի ԺօռԺ Սան տկարութիւն և բաւրութիւն. «... Առանց քու երիտասարդութեանդ և այն տկարութեան զոր քու արցունքներդ պատճառեցին ինծի առաւ մը, եղբայր և քոյր մնացած պիտի ըլլայինք»: Ինչ հանգամանք ունեցան Միւսէի և ԺօռԺ Սանի սիրահարական յարաբերութիւնները: Բնականաբար չառ բան մը չենք գիտեր այս մասին, սակայն և այնպէս կ'երեւայ թէ ԺօռԺ Սան հակառակ իր սիրոյ յաւիտենական պէտքին, խառնուածքով չառ պող էր: Ամէն սրբապաշտ մէջ Միւսէ ԺօռԺ Սանը կը մղադրէր թէ իր երազած տարիուհին չէ. ԺօռԺ Սան կը գրէ իր 1834 ապրիլ 15—17 նամակին մէջ. «... Իրաւունք ունիս. մէք համբոյրը ազդապղծութիւն էր, բայց մենք չէինք գիտեր զայն. մենք անմեղօրէն և անկեղծօրէն իրարու գիրք կը նետուէինք. լաւ ուրեմն. ունինք միակ յիշատակ մը այդ գիրքնդ խառնութիւններէն որ անբիծ և սուրբ չըլլայ. անպիի և զաւանջանքի օր մը մեղադրեցիր ինծի թէ չկրցայ սիրոյ հաճոյքները սող քեզի. այն ատեն լացի ես ասոր վրայ և հիմա դո՛ւ եմ որ ճշմարտութիւն մը կայ այս մեղադրանքի մէջ: Գո՛հ եմ որ այդ հաճոյքները աւելի ժուժկալ եղան, աւելի քօղարկեալ քան անոնք զոր դուն պիտի դանես ուրիշ տեղ. գոնէ զիս չպիտի յիշես ուրիշ կիներու բազուկներուն մէջ, բայց երբ մշնակ ըլլաս, երբ ազօթեղու և լալու պէտք ունենաս քու ԺօռԺիդ վրայ պիտի մտածես, քու ճշմարիտ ընկերիդ, քու հիւանդապահուհիդ, քու բարեկամիդ և ասոնցմէ աւելի բանի մը վրայ: Որովհետեւ մեզ միացնող զգացումը կազմուած է այնչափ բաներէ որ չկրնար ուրիշ որ և է զգացում մը հետ բազդատուիլ: Աշխարհ երբեք բան մը չպիտի հասկնայ անկէ»: ԺօռԺ Սան անիրաւ է: Չկայ բան մը որ այնչափ գիւրտ հասկցութիւն իր վերի խօսքը: Ինք խիստ բարի կին մը է, մշտն սիրով խռոված, որ չէր կրնար այնչափ հեշտութիւն տալ, բայց երջանկութիւն կը սրբաբեւէր անոր որ անպահանած չէ: Առիկա դժուարահասկնայի չէ:

ԷՄԻՆ ՖԱԿԷ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

ՏԱՐԵՑՈՅՑՆԵՐԸ.—Ա.

ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

Ժողովրդային ռամիկ, դիւրահաճ ու աւելապէս ճաշակները գոհացնելու իրենց ընկալելի կոչումով, «Տարեցոյց»ները չպիտի կրնային արժանի ըլլալ Գիրքի պիտակով մնայուն հրատարակութիւններու արժէքին,—որպէս զի կարենային մասեւնախօսական ուշադրութիւն մը հրաւիրել իրենց վրայ,—բայց այն նկատմամբ թէ անոնք աւանդական այդ ուղղութենէն շեղած ընդթող մը կը մատուցուն համեմեմեան այսօր, եւ Գիրքի կոչումն ալ մարմնացնող սարբերով զգեստաւորուած կը ներկայանան, իրապէս կը հարկադրեն էնթալտիւիզի գիրքի արժանի նկատողութեան մը ընտելեման:

Նշան-Պապիկեան 1907ի Տարեցոյցը, ուրեմն, ինչպէս իր նախորդները, շեղում մըն է դէպի գիրքի ձգումին իրականացումը, առանց գերծ ըլլալու «Տարեցոյց»ի հիփօթեայ աւանդութիւններէն: Ան ունի ժողովրդային ճաշակներու գգուանքին ուղղուած իր թեմէն բաժինը,—որ գիրքը կը բանայ եւ շահագէտ առաջնութեան մը իրաւունքը շահած ըլլալ կ'երեւայ,—ինչպէս ունի իր լուրջ բաժինը, հիմնովին գրական ճաշակով յղացուած:

Նիւթերու դասակարգութեան հետեւելով, դիտելի է որ, զբաւեցուցիչ իր դերին մէջ, այդ առաջին բաժինը շատ գէշ յղացուած ծրագիրի մը կը հետեւի, իր մէջ բովանդակելով անկապակիչ ու անճաշակ խառնակութիւն մը ամէն նիւթերու, մանաւանդ անվերջանալի թոյնութիւն մը «գուարճալիք»ի, առանց հրապուրիչ սրամտութեան մը, առանց երգիծական անակնկալի մը:

Հասկնալի է Տարեցոյցի մը մէջ զբաւեցուցիչ զանազանութիւնը նշանակելի ծանօթութիւններու, գիտելիքներու, վիճակագրութիւններու, բայց մնայուն ծախսագիրքի մը կոչուած հրատարակութեան մը մէջ, ինչպէս է գիրքը, անխմաստ ու անհեթեթ է անվերջանալի խնդրումը պարզ գաւառացիներու, որոնք աւօրեայ զա-

ւեշական հրատարակութիւններու մէջ միայն թերեւս ունենան իրենց մոտարի իրաւունքը, Տարեցոյցին առաջին բաժինին այդ անպէս ծանրաբեռնումները,—որոնց արտաբնական շատ քան պիտի շահեցնէր իր արժէքին,—բարեբախտաբար կը դարձանումին քանի մը էջերու հասնելի ներկայութիւնով: Ասոնց առաջինն է Հայ երգիծաբաններու նուիրուած էջը, որուն գեղեցիկ ծրագիրը կ'աղաքսուի սակայն իր գէշ զործարարութենէն: Հապճեպ, գունաթափ, անպատաս փրճիկով մը նկարուած են դէմքերը մեր երգիծաբաններուն, անխորժ կատակներով զուարճաւէր ձեռքի մը մէջ, որուն քմահաճ ուրուագրութիւններէն կտալին վրայ սուտերագրուած նկարները չեն ցայեցներ զանոնք ներկայացնող դէմքերուն ամբողջական նկարագիրը, իր Մարդ կամ իր Գրագէտ, ինչպէս պահանջումն է նոյն իսկ «վայրկենական» նկարին: Աղէկ չեն ներկայացուած նոյնպէս այդ երգիծաբանները իրենց գրուած քննրէն նմուշներուն մէջ: Երկրորդ շահեկան էջն է այս բաժինին, ու ճշմարտապէս Տարեցոյցի վայել էջը,—որուն նմաններովը կարելի էր յաջողապէս փոխանորդել բոլոր միւս անպէս դասարկաբանութիւնները,—նշաններու սիրային կեանքին վրայ գողտրիկ թարգմանութիւնը, ա'յնչպիսի նոր, ա'յնչպիսի ընթերցելի, մէկ ծայրէն միւսը: Ասոր կ'ընկերանայ նոյնչափ շահեկան մէկ գրուածքը Սըր ձօն Լըպօթի, հարիւր կարեւոր գիրքերու վրայ: Իր յղացումով եւ արմիս խմբագրութիւնովը յաջող հասուած մըն է նաեւ «Փիլիսոփայական Բառարան»ը, զոր ստորագրած է Ե. Թօլայեան, եւ ինչպէս... իրն է ամբողջովին:

Գիրքին Բ. բաժինը կը խաղցնէ զբոլումը քննրելու եւ լուսանկարները զանազան դէմքերու, առաւելապէս նորերէն:

Այս մասը կը բանայ Մուշեղ Եպիսկոպոս, իր խմաստալից մէկ ներշնչումովը Պատկերներու վրայ, —յափշտակուած փառաբանութիւն մը Տիրամօր ու անոր աստուածային Զաւակին կեանքերը ամսահացնող խորհուրդին շուրջը: Խորհրդածութիւն մը լեցուն այն թելադրիչ գաղա-

փարներով ու խորիմաս հայեցողութիւններով, զորս գրական ա՛յնչափ մեծափայլելու ճաղանդով զիսէ՛ տղել անոր հեղինակ ներհուն գրագէտ—եկեղեցականը:

Իրեն կը յաջորդէ նա՛յնչափ արժանաւոր գրագէտ մը եւ իմաստասիրող միտք մը, Յ. Գ. Մամբրեան, իր անշուստ խոհումներով, խորագրուած «Տարօրինակ խոհումներ», որ սպառնալիս վրէպի մը զոհուելով այդ պլակեդպութիւնը ստացած է, ինչպէս կը հաջորդէ մեզ հեղինակը անմոռապէս, եւ զոր հոս սրբագրելով հաճոյք մը պատճառած պիտի ըլլանք իրեն, քանի որ ա՛յնչափ դժգոհած է իր «Տարեկան խոհումներ»ը այդ տարօրինակ «Տարօրինակ»ութեան ենթարկուած ճեսնելով:

Մեծապ նուպարեանի գրուածքը շահեկան ու լայն նիւթի մը՝ «Իզմիրի Հայոց Զարգացումը ասկէ կէս դար առաջ»՝ թերի ու հապճեղ ներկայացումն է, քիչ մը այն դանդաղ ու անհրապոյր ոճով, որ Իզմիրցի այս գրողին յատկանիշն է:

Ալիբաւ, միշտ իր տարին մէջ, կը հիւսէ գեղեցիկ էջ մը «Սիրոյ Շուրջը», զոր,—պէ՛տք է ըսել,—կարգալով կարելի է ճաշակել:

Տէմիրճիպաշեան ունի երկու բնաստեղծութիւններ, տարբերուած այն շունչով ու ոգիով, որ միշտ եղիւսինն է.—«Ծովադամբանս ի Պոսփոր», «Ստուերք»:

Զապէլ Եսայեանի «Գուշակը» գրական բարձր արժէքով խորհրդապաշտ էջ մըն է, զեղուն նուրբ զգայութիւններով ու համակրելի ինքնասպումեամբ մը նիւթի Պատմութիւնն է ան կնոջ մը գաղափարէն վերադառած բժիշկի մը, որ զայն ճանչնալու իր խաբխախանքներով կը անջուրի:

Ու պոլսական դէմքերու այս տղանցքը պահ մը կ'ընդհատուի ներկայութենէն այն զմայելի գրողին, այն անգուգական տաղանդով գաւառացի ինքնատիւ գրողին, որ «Թլկասինցին» է: Ինչպէս միշտ, այս անգամ ալ, ան իր ստորագրութիւնը կ'անմահացնէ էջով մը, որ մեր գրականութեան ամէնէն փայլուն մասին յասկացուած է, իր «Ըսէ՛ ինձի, ի՛նչ կայ»ն,

պերճախօս ճանն է անդեմականի կեանքին խորհուրդին առջեւ շուտօրէն միտքի մը, ոգեւորուած հառաչալիւր՝ շունչովը հոն չուած մօրք կարօտին, եւ կենդանի, իրական, վրդովիչ զգայութիւններովը ներկայ ու ապագայ կեանքերու խորհուրդները քերթող գերագրգիւռ յուզումով բանաստեղծին: Պէ՛տք է ամբողջութեամբ մէջ կարգալ այդ էջը, ճեսնելու համար թէ մօր մը յիշատակին նուիրուած չոր նիւթը ի՛նչ յուզիչ ներշնչումներով կենդանացուցած է գաւառացի այս դիւթիչ քերթողը ու տաղանդաւոր կախարհը:

Տոմիկի զգայութիւններով ու բաբախումներով երգուած այս էջէն ետքը, ոտսում մը դէպի գիտութեան սահմանք, ուր Յովհ. Գալանճեան ամփոփ բայց կուռ տեսութեան մը մէջ կը խտացնէ ինքնամեղադրութեան սկզբունքները, հրնարաւորութիւնները եւ Գիտութեան առջեւ անոր ստացած կարեւորութիւնը:

Զիֆթէ-Սարաֆի «Ինչպէս կը խաբեն»ը տեղական կեանքէ կենդանի դուռագ մըն է, եւ պատմութիւնը նախանձօտ ամուսինէն կաշկանդուած կնոջ մը, որ այլուր փնտած սէրերուն եւ տարիանքներուն յագուրդը կը գտնէ դրացի գեղանի երիտասարդի մը տիպարին վրայ երագուած ինքնամեղադրութեան (auto-suggestion) հնարքներուն մէջ, եւ իր կեղծ սէրովը կը խաբէ ամուսինը, կամ ... ինք կը խաբուի զիշեր ցորեկ, Զիֆթէ-Սարաֆի այս պատմուածքը իր արժէքէն կը տուժէ՝ երեսնէն այն ոչ-հայացի բառերուն եւ ռամիկ բացատրութիւններուն, որոնցմով ողորդուած է անոր ամբողջութիւնը, եւ որոնք կը խաթարեն ու կը խորթացնեն գրուած քին՝ հոգեբանութիւնը:

Փանոսեանի «Պարկէշ Սուրբը»ն ժողովրդային տաղաչափուած պատմուածք մըն է՝ զուարթ ու անակնկալ իր ելքովը զրօսալի:

Տօմիկն կը նկարագրէ «Վախում Պատմութիւն»ը Հրեայի մը, որ կնոջը յանկարծական մահուան յիշատակին սուր տալաւորութենէն ազդուած՝ կը ստակայ միշտ մեծութենէն, խանգարուած իմացականութեան մը խաւար թելադրանքներուն եւ-

թակայ, Յաջողապէս պատմուած ու ճըշ-
գրօրէն վերլուծուած է հոգիք մտու-
թիւնը այս ինքնասխալ նիւթին:

Աննախընթաց նորութիւն մըն է Արսա-
շէս Յարութիւնեանի աշխատութիւնը՝ Տա-
րեցոյցին մէջ, «Դրախօսական փորձեր»,
մեղադիրներուն վրայ Սիլիկի եւ Եղիա
Տէմիրճիապաշեանի: Յարութիւնեան մեր
մէջ միայն ծանօթ հետեւողն է այս գիտու-
եան, եւ մեր երկու նշանաւոր գրողներ-
ուն՝ մեղադիրներէն՝ գրաստանութեան
օրէնքներով հետեւցուցած իր վճիռները՝
մեծ գրողը ունին յաջողութեան եւ հե-
ղինականութեան, Գիտութեան եղբայր-
ացութիւնները Յարութիւնեան կիսուածա-
նկարած է գրական շրեղ շրջանակներու
ազդեցութիւն մէջ, որոնց համախառն
ուրուագիծներէն ճշմարտման մեղով մը
կը ցայտն քննութեան առարկայ գրող-
ներուն խտրութեան, նկարագիրն եւ
գրական յատկութիւններուն նրբորանգու-
թիւնները:

Գեղամի դէմքը՝ որչափ համարելն ու
գրաւի՛ իբր՝ տոնիկ տպար, նոյնչափ
անխորհուրդ սխալ մըն է իբր՝ դէմք իր
մուտքը Տարեցոյցին մէջ, որովհետեւ
ապահովաբար քանի մը թղթակցութիւններ-
ով ու գաւառական հէքեաններով չէ՛
որ մէկը կրնայ դէմք հաշտակուտ արժա-
նանալ, իրապէս այդ իրաւունքին տիրա-
ցած նշանակելի դէմքերու քով Այս
գրողն ալ, իր կարգին, իր «Մէկ ու ճար
Շուշիկը»ով կ'իյնայ սխալի մը մէջ, զոր
մէկ քանիներ պատասխել փորձած են
գաւառական գրականութեան, գրական
մուտք ուղղութեան մը մասնաւորով: Գա-
ւառական գրականութիւնը բնելու կոչումը
չէ՞ գրուածքը ծանրաբեռնել գաւառա-
կան աստութիւններով ու դարձուածքներով:
Այդ տեսակ ուղղութիւն մը այն տեսն
գոյութեան արժանի կրնայ ըլլալ՝ երբ
գրող մը իր գաւառին միայն ուղղուի իր
գրականութիւնով, երեւակայել որ, գրա-
կան ինչ զարհուրելի բարեւոյն մը պիտի
ըլլար, երբ աւելն գաւառացի իր գաւա-
ռաբարբառով գրականութեան մը սխալ
գրական մայրաքաղաքացի միջավայրի մը
մէջ, ուր գրական ընթացիկ լեզուէն զատ

ն'չ մէկ բարբառ կը հասկցուի կա՛մ կը
խօսուի: Անհամարժեքի է այն լեզուն,
զոր Գեղամ կը գործածէ իր պատմու-
եանը յօրինուածքին: Քանի մը տող-
տետէր քան մը կը հասկնա՞ք.—

«Խզոյի հոշիւ համարուկը
լցուաւ» . . . : «Կեցիկէն չոր
պոնոնակ զՄօն կծելու» . . . :
«Նար-հորեկ զարունը՝ խառ ու
մառ կը շողողէր էնոր փիլպսան
ու պոնոնակ կողերը» . . . : «...ու
ձեռներովն մեղունակ մանաւայ
կ'մաղէր ծուտ փառանքին ու
փարատող ուտային» . . . :

Ու չեմ կրնար շարունակել ընթերցու-
մը այս «ճոշքի ճամպուկ», «պոնոնակ»,
«խառ ու մառ փիլպսան»ին, որ Տարե-
ցոյցը կը փակէ:

Ե. Ա.

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՇՈՒՄԱՆԻ ԼԵՍԵՆՈՐ

Շուման միշտ պայքարող մը եղած է
արուեստին համար. իր առաջին օրերէն
դէպի երաժշտութիւն հակում մը ունեցաւ,
բայց իր ծնողքը երաժշտաւէր չէին, եւ իր
տունին մթնոլորտը ամէն քան էր, բացի
երաժշտական ըլլալէ: Երբ Շումանի հայրը
մեղաւ, իր մայրը եւ խնամակալը չուզե-
ցին որ անիկա երաժշտական արուեստը
ընդգրկէ. հետեւաբար Շուման Լայբցիկ
գնաց, անուանապէս իրաւաբանութեան
հետեւելու, մինչ ան դառնակի վրայ փոր-
ձեր կը կատարէր Յրէտերիֆ Ուրֆի առաջ-
նորդութեամբ: Յետոյ Հայտելիքի համա-
լսարանը մտաւ, բայց հոն ալ երաժշտու-
թիւնը աւելի հետաքրքրական գտաւ քան
իրաւաբանութիւնը: 1830ին հասն տա-
րեկանին, մօրք հաւանութիւնը ստա-
ցաւ երաժշտագէտ ըլլալու: Ուստի Լայբ-
ցիկ վերադարձաւ, Ուրֆի հետ բնակեցաւ
եւ ամիկէ ետք ինքզինքը նուիրեց սիրտին
մթակ տենչանքին:

Իր աչ ձեռքին ցուցամասը գէշ կեր-
պով վիրաւորուած ըլլալով, virtuose ըլ-
լալու զաղափարը լինէլ տխրութեամբ:

Առանց ինքզինքը կորսնցնելու, երգանա-
նութիւնը ուսումնասիրեց եւ գրական
գործի մըն ալ ձեռնարկեց: 1834ին հիմ-
նեց հեռանաւոր *Նոյէ Զայծշուֆի Զիւռ*
Միւզիւք քերքը, որուն մէջ ինք եւ իր
պաշտօնակիցները կը մտաւէին կարգ մը
երաժշտական ընդունում ըմբռնումներու
դէմ: 1838ին քերքին անյաջողութենէն
դժգհ, Վիէննա գնաց, հոն հրատարակե-
լու համար քերքը, բայց դժուարութիւն-
ներ անյաջողութիւն ըլլալով, յաջորդ տարին
Լայպցիքի դարձաւ եւ 1840էն ինքզինքը
նուիրեց միայն երգանաւորեան: Իր
գրական գործունէութեան հետ պատահեցաւ
իր կեանքին էն յուզիչ դրուագներէն մէ-
կը, սիրահարութիւնը Քլարա Ուրֆի հետ,
գոր հանչեցաւ էր զայուրեմէն: Երբ
1835ին անոր ձեռքը խնդրեց, անբանա-
ւոր եւ ուժգին դիմադրութեան մը հան-
դիպեցաւ աղջկան հօրը կեղծէ, որ կ'ը-
սէր թէ ինք տար տարի երաժշտական
կրթութիւն տուաւ աղջկանը եւ հիմա կը
փափաքէր անոր վարձը եւ պատիւները
հաղել: Բայց Քլարա՝ Շուտմանի հաւատա-
րիմ մնաց եւ չորս տարի չափ ետքը Շու-
տման հուսանութիւն ստացաւ ամուսնանա-
լու անոր հետ, ո՛չ թէ հօրը այլ Լայպցիքի
մէջ գտնուող իրաւագէտ հեղինակութեան
մը շնորհիւ:

Ամուսնութիւնը կատարուեցաւ 1840ին,
բայց հօրը եւ աղջկան հաւատարմութիւնը
1843ի ծնունդին էր որ տեղի ունեցաւ:
Շուտման բնածիր արուեստագէտ մըն
էր: Ամուսնութենէն վերջը իր կարողու-
թիւնները աւելի ընդլայնեց եւ արտադրեց
երգեր, *սէնֆօնիներ*, իր *Ֆաուստը* եւ *Հայ-
նէի*, *Կեպէի*, *Կեօքէի* Շալիսի, Պրոմի
երգերէն կազմած երաժշտական կտորները
ա՛յլնչափ հանրաճանօք են: Ինք յո՛րինաճ է
հասել Պոլքընի «Էնկմէտ»ին համար այն
եղանակը, որ կը բաղկանայ նախերգանքէ
մը եւ 15 կտորներէ: Ըսուած է թէ՛ Շու-
տմանը ընկնող անգլալ հակասազիրը հան-
հարին պատիժն էր. բայց այսանոգայտը
սխալ է այս գաղափարը: Շուտման խորա-
պէս զգացող, հանգաւոր, զգաւաւոր մարդ

մըն էր, եւ իր խօսակցութիւնը ընդհան-
րապէս միավանկ էր. թէեւ միշտ մեկա-
մաղձոտ խառնուածքով՝ բայց ազնիւ.
նկարագիրի տէր էր: Իր աւէնէն աղետալի
սխալը եղաւ երաժշտական վարիչի պաշ-
տօնը ընդունիլը Տիւնէսթորֆի մէջ:

Ինք մեծ երգանաւոր մըն էր, բայց ո՛չ
վարիչ մը եւ իր դժբաղդ փորձերը շու-
տով խանգարեցին իր առողջութիւնը:
Շուտման մեռաւ 1856ին, 46 տարեկան, եւ
բաղուեցաւ Պօնի հիմնաւորը գերեզմանա-
տունին մէջ: Իր գերեզմանին վրայ որ հի-
մա նստելու իր կնոջը գերեզմանն ալ է, կը
գտնուի պարզ բայց գեղեցիկ յիշատակա-
րուն մը, կենդանագիր արձանով մը: Եր-
կու կ'ուր կը գտնուին հրեշտակներ,
որոնց մէկը ձայնական երաժշտութիւնը կը
ներկայացնէ, միւսը գործիականը: Խոկ
ստեղծը կայ իրական դէմք մը, որ իր
կնոջը կը նմանի եւ որ դափնեպսակ մը
կ'երկարէ իրեն:

ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ

Կիրակի օր, հանդիսաւոր շէնդու-
քեանք կատարուեցաւ Հիւանդանոցի նո-
շաւէն մատուոն եւ Յակոբեանի ծախով
շինուած յարկարածիւնին բացումը, հա-
լապահաւորեամբ Ս. Պարթաբիւն:

o: Գեղարուեստական յաջողութիւն մը
եղաւ կիրակիի՝ դերասանապետ Մնակեանի
նպատակին համար կազմակերպուած բաշե-
րական ներկայացումը, որ փայլուն ու
անմիան ընդունելութեամբ մը պսակուե-
ցաւ: Ներկայացումին կ'ընկերակցէր Սի-
նանեան նուագախումբը, որ երաժշտական
գեղեւթի նուագածութիւններով աւելցուց
փայլը բաշտին:

o: Մեր շնորհակալութիւնները՝ *Արեւ-
ելը*, *Բիւզնդիան*, *Մանգամէ* եւ *Սուր-
հանդակ* օրաթերթերուն, որոնք համակիր
սողերով շոջունեցին Մասիսի խմբագրա-
կան ներկայակերպութեամբ վերելու-
մը, իր գրական եւ գեղարուեստական
Շարքաթները:

Հիմնադիր. Կ. Ս. ԻԻԹԻԻՃԷԱՆ: Արտատպ. ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ: Տպ. Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

ՊԱՐԳԵՒԱԽՈՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիսի բաժանորդագրութեան մէջ՝ ընթերցողները օժտելու համար զբաղան հրատարակութիւններով, հաստատած ենք նուէրներու գրութիւն մը, որ հաճելի եւ շահուէաւ տալի՞ մը կրնայ ըլլալ մեզն ընթերցողի համար: Դեկտ. 1 էն մինչեւ երկու տալիս Մասիսի բաժանորդագրուիլ փութացող ո՛ր եւ է ընթերցող՝ իրաւունք պիտի ունենայ ստանալու երկու զբաղան հատորներ՝ օրումն մեզնէն այժմէական հրատարակութիւններէն, իրենց ընտրանքին համեմատ:

Այդ հատորներն են

ՅՈՒՐԱՐ.	— ՍԻՊԻԼ	Դիմ 5 դր.
ԵՐԱՌԻՒՆԵՐ.	— ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	» 5 »
ԿՆՆՁ.	— ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ	» 5 »
ՆԵՐԱՇԵԱՐՀ.	— ԻՆՏՐԱ	» 12 »
ԱՆՐԱՅԱՆԵՐ.	— Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ	» 5 »
ԼԵՌՈՒՍԻՒՆ ԲՆԱՐ.	— ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	» 5 »

Մինչեւ երկու տալիս կը տուէ պայմանաժամը այս պարզեւաւոր բաժանորդագրութենէն օգտուելու տալի՞ն, որմէ ետքը բաժանորդագրուողներ չպիտի կրնան նորատուարուիլ անկէ: Իսկ անոնք որ փութան մինչեւ այդ պայմանաժամին լրումը բաժանորդագրուիլ Մասիսի, առանց որ եւ է բացատիլ զճարման, զկրելի հրատարակութիւններէն իրենց ընտրանքին համեմատ իրաւունք պիտի ունենան ստանալու 10 դրշնոց զէրք, զոր թղթատարի ծախքը (3 դրշ.) մեր վրայ՝ պիտի փութայնենք իրենց հասցէին՝ իրենց բաժանորդակիւնին առաքման յաջորդ թղթատարով: Յայտնապէս զգալի է թէ, անուղբակի կերպով 13 դրշ. ի զեղէ մըն է Մասիսի բաժանորդագրութեան վրայ նուէրի այս գրութիւնը, զոր հաստատած ենք՝ հիմնադէս զիւրաժանացելի եւ աժան ընծայելու համար Մասիսի բաժանորդագրութիւնը, եւ ընթերցողները օժտած՝ վերջին մեզնէն վնասուած զբաղան հրատարակութիւններով:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազն. Միսնի էֆ. Գառարձեան՝ տարուն մը Մասիս նախած է Ազգ. Հիւանդանոցին: Նոյնպէս տարուն մը Մասիս Գաղփանիսն Որբանոցին՝ Ազն. Թորգոմ էֆ. Գառարձեանը: Մասիս շնորհակալութեամբ կ'արձա՛նադէ իրեն եղած համակրութեան այս գործնական նշանը:



Ձեռքի, ուսի ու ուսի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

Սինգերի մեքենաները կը ծախուին միմյանց Սինգեր Բնակարաններ
վաճառատաններուն մէջ:

Ս
Ի
Ն
Կ
Ե
Ր
Ի
Մ
Ե
Ք
Ե
Ն
Ե
Ր

- | | |
|---------|--|
| ԿԱՆԱԾԱՆ | 1. Մեծ փողոց, Պօն Մատչէի դէմ, Թ. 343 եւ 343 |
| ԲԵՐԱ | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ. |
| ՊՈԼԻՍ | 1. Սինկեր խան, Թիւնէլին համար. |
| | 2. Գարաքէօյ, Թրամկէյին կայարանին դէմ. |
| ՍԱԽՆԱՐ | 1. Սալթան համար. |
| | 2. Սալթան Պէշաղլա, Թրամկէյի կայարանին դէմ. 13. |
| | Զարչը Պօյու, Թ. 120. |
| | Գասեր եւ նորոգութիւնները ձրի. |

Կասաբեայ երաշխաւորութիւն:
Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Բնակարաններուն կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ
Փողոց, Թիւ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղուլուի տունը:
(2—10)

ՏՕՔԹ. Ե ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդ-
դաթիւններէ զատ, մասնագի-
տաբար եւ երկար ստորինքէ խիւր
կը դարմանէ ստամոքսի, աղիք-
ներու միջային, ճամբաներու հիւանդութիւնները, ջրային տկարութիւն-
ները, հին եւ նոր գաղիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց
ստամոքսի խանգարման եւ նորագոյն միջոցներով կը բուժէ կարճ միւ-
ջացի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս-օրէ վերջը: Զարեքչալթէ
օրերը միայն ձրի:
(2—10)

ՏՈՒԹ. ՅՈՎԱ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ժողովրդային Առողջաբանական Հրատարակութիւնները

Մանչեսթըր բժնամիջ	5	դր.
Կես-բժշկական խօսակցութիւններ	5	դր.
Թոմասի վրայ կենսական ծանօթութիւններ	60	փրլ.
Մանչեսթըր բարեկամք (քարգ.)	60	փրլ.
Կեդրոնատեղի՝ Պալեմո Քրասուն, Կ. ՊՈԼԻՍ. (2—10)		

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻՍԿԻՆՅԱՆ

Դրատան անունը՝ կը
բաւէ տպահալելու
համար գրեխօսկան

պէտքեր տնտեսայնորը թէ՛ անիկա լրումն է ազդանութեան, նշատկա-
նութեան եւ արագութեան: Կը բաւէ անգամ մը գլխի՝ համարուելու
համար այս մասին: Հասցէն է՝ Խորասանձեան Խան, թիւ 33: (2—10)

PHOENIX ASSURANCE Ltd. Co.

“ՖԻՆԻՔՍ,”

ՀԻՄՆՈՒԱԾ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ 1782 ԻՆ.

ՊՈԼՍՈՅ ՄԷՋ ԿԷ. ԳՈՐԾԷ 1869 ԷՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼԻՍԿԱՆ ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ եւ պահեստի դրամ

Անգլիական ոսկի 4,218,000

ՖԻՆԻՔՍ սոսկ հրդեհի, զէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է,
ծանօթ իր պատուաւորութեամբ եւ փնտնելու մէջ իր անմիջական
վճարումներով:

ՖԻՆԻՔՍ կ'ապահովագրէ հրդեհի եւ կայծակի զէմ ամէն տեսակ սնւ-
շարք եւ շարժուն ստացւածք խիստ նպատաւոր պայմաններով:

Ընկերութեան նշանաբանը եղած է.

ՈՒՂԱՄՏՈՒԹԻՒՆ Ե ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՈՒՄ ՎՆՍՆԵՐՈՒ:
Յարդ վճարած է 27,000,000 անգլ. ոսկիէ աւելի:

Ընդհանուր գործակալ Պոլսոյ եւ դաւաճներու,

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վիքալիս խան, Պանկ Օթումալի մօտ, Ղարափա:

Փոխ գործակալ Պոլսոյ

ՃԻՎԱՆ ԹԷՔԷՆԱՆ

Ֆնտկան խան

ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և դաւաններու համար ստորեկան 60 զբէ. :
Արտասահմանի » » 14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին տանադու մ. ք սպարդեաներէն ձրկադար
երկու զէրք, իրենց բնաբանքին համեմատ, թղթատարութեան ծախքն
ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը բաշարձակապէս կանխիկ է :

Զննաւարկութեան ձեռագիրները կա չեն դարձուիր :

Նամակ կամ սր եւ է դրութիւն ուղղել Խմբագրութեան հասցէին. —

درمليه باب على مارده ستره نو٥٢ « ماسيس » غزنه ي ادارہ ہائے

ԵՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ « ՄԱՍԻՍ » Ի

Պապր-Ալի ճուսսէսի, ք/ն 52. Կ. ՊՈԼԻՍ

Rédaction de la Revue „MASSIS“

Avenue de la Sublime Porte, No. 52.

CONSTANTINOPLE

ԶՈՒԱՐՃԱԼԻՆ ԵՒ ՕԳՏԱԿԱՐԸ

Բաղդաստեյէք ու տեսէք

Կարդայէք ու հաճախէ՛ք

Թէ միտք անցնան է

ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ

1907 — Գ. ՏԱՐԻ

300 էջ, 10 Պատկեր. Դին . . . 63 . . . 5 զբէ.

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ !!!

Յօդուածներ՝ մեծագոյն գրողներէն

Սրահուրիւններ՝ ամենէն համոզներէն

Զուարեակիներ՝ ամենէն գուարբներէն :

Հատորը՝ փառաւոր և սրտկառելի

Պատկերները՝ մը՛շտ անմահ և անհաւատարմի

Կը ծախուի ամեն տեղ եւ ցաւել ՆՇ ՆՆ-ՊԱՊԻԿԵԱՆ գրաստիք. Կ. Պոլիս:
(2—10)